ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<< 15 >> նոյեմբեր 2017թ. N 191

ք.Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՏԱՐԱՀԱՆՎԱԾ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԿԵՆՍԱԱՊԱՀՈՎՄԱՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728-Ն հրամանագրի 1.22-րդ կետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հունիսի 24-ի N824-Ն որոշման 2-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Արմավիրի մարզային փրկարարական վարչության կողմից մշակված Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի տարահանված բնակչության կենսաապահովման պլանի կառուցվածքի օրինակելի ձևը

որոշում եմ.

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի տարահանված բնակչության կենսաապահովման պլանը՝ համաձայն հավելվածի:

2.Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության Արմավիրի մարզային փրկարարական վարչության պետին՝

1) կազմակերպել սույն պլանի ճշգրտումները յուրաքանչյուր տարվա հունվարի 1-ի դրությամբ, ճշգրտմանը ներգրավելով բոլոր շահագրգիռ մարմիններին, իսկ անհրաժեշտության դեպքում նախապատրաստել փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին որոշման նախագիծ.

2) մինչև յուրաքանչյուր տարվա ապրիլի 1-ը ճշգրտված տարբերակներն առաքել ընդգրկված մարմիններին:

3. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը վերապահել Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության Արմավիրի մարզային փրկարարական վարչության պետ, փրկարար ծառայության գնդապետ՝ Հովհաննես Մարգարյանին:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ